

ԱՐԴՎԻՆԻ ԲԱՐԲԱՌԻ ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Ա. ԱՆՎԵՐԴՅԱՆ

Վիեննայում հրատարակվող «Հանդես ամսօրյա» պարբերականի 1889—1890 թթ. տարբեր համարներում լույս են տեսել Կ. Տուրյանի «Ծորոխի վրան և շուրջը» ճանապարհորդական նոթերը, որտեղ հեղինակը պատմական, աշխարհագրական և ազգագրական կարևոր մի շարք տեղեկությունների հետ համառոտակի նկարագրել է նաև Արդվինի բարբառը, Գրի է առել օրորոցային և հարսանեկան երգերի մի քանի պատգամներ, տվել որոշ անծանոթ բառերի բացատրությունը, ինչպես նաև՝ ստուգաբանել Արդվինի թաղամասերից մեկի անունը կրող կօրձուկ բառը (վրցկարի ձուխի «հին դուռ»)։ Կ. Տուրյանը Արդվինի բարբառի մասին գրում է.

«Արտանուշի և Արդվինո հայերեն զավառական լեզուն (բարբառը — Ս. Ա.) ավելի մոտ է Տփղիսի արևելյան բարբառին քան արևմտյանին. Կ. Պոլսո նույնպես տառերու հնչումն»¹։ Այնուհետև բերում է նմուշներ։

Այսպիսով, Արդվինի բարբառի մասին առաջին անգամ որոշ տեղեկություններ և բարբառային (չնայած ոչ գիտական տառադարձությամբ) նյութեր է տպագրել Կ. Տուրյանը։

Զարմանալի է, որ մեծ հայագետի՝ Հր. Աճառյանի սրահին աչքից վրիպել են Կ. Տուրյանի կողմից տրված տեղեկությունները Արդվինի բարբառի վերաբերյալ։ Այդ է պատճառը, որ նա 1911 թ. գրել է. «Այս բարբառին վրա ոչ մեկ ուսումնասիրություն և ոչ տող մը բնագիր կա հրատարակված, ուստի հաջորդ տողերը իմ անձնական հետազոտությանս արդյունքն են՝ Բաթումի մեջ քաղված զաղթական Արթվինցիներին»²։

Երկրորդ անգամ Հ. Աճառյանը Արդվինի բարբառի մասին շատ սեղմ ու ընդհանուր գծերով բարբառային մի քանի տեղեկություններ է ներկայացրել իր «Հայ բարբառագիտություն»³ աշխատության մեջ։

1939 թ. պրոֆ. Ա. Ղարիբյանը հայտնաբերեց 5 նոր բարբառներ (Շատախ, Կարճևան, Մեղրի, Հաղրութ, Ուրմիա), որոնց, ըստ ներկայի և անցյալ անկատարի ձևաբանական հատկանիշի, անվանեց Ս ճյուղի բարբառներ։ Նա «ս» ճյուղի մեջ մտցրեց նաև Արդվինի բարբառը, վերահիշյալ բարբառների հետ ուսումնասիրելով նաև Արդվինի բարբառը⁴։ Պրոֆ. Ղարիբյանը ժամանակին ճիշտ է նկատել, որ Արդվինի բարբառը ոչ միայն նմանություններ ունի Թբիլիսիի բարբառի, այլև Կարնո բարբառի հետ, որ այդ նմանությունները պատահականությամբ չի կարելի բացատրել։ Պատմական որոշ հանգամանքներում Արդվինի բարբառախոս բնակչության մի մասը տեղափոխվել է Արտահան ու Օլթի քաղաքները և միասնառնվել Կարնո բարբառի ներկայացուցիչների հետ⁵, որոնց համատեղ կյանքը առաջացրել է բարբառային փոխազդեցություններ։

Ստորև ներկայացնում ենք Արդվինի բարբառի ձևաբանության մի քանի բնորոշ առանձնահատկությունները։

Ա. ԳՈՅՈՒԿԱՆ

Հոգնակիի կազմությունը

1. Արդվինի բարբառում հոգնակին կազմվում է հիմնականում էր, նէր, սուան մասնիկներով։

2. էր մասնիկն ստանում են՝

ա) Միավանկ բառերը, ինչպես՝ գայլ > գէլ-գէլէր, ժամ > յամ-յամէր, ջուր-ջուր-ջրրէր։

¹ Կ. Տուրյան, Ծորոխի վրան և շուրջը, «Հանդես ամսօրյա», 1890, էջ 282։

² Հր. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա — Ն. Նախիջևան, 1911, էջ 291։

³ Նույն տեղում, էջ 291—292։

⁴ Ա. Ղարիբյան, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Պետական համալսարանի դիս. աշխ., հատ. 11, 1939, էջ 33—49։

⁵ Ա տրպետ, Ծորոխի ավաղանը, Վիեննա, 1829, էջ 181—182։

Այսպես են նաև փոխառյալ բառերը. ինչպես՝ բուզ-բուզեր (վրց. ճանճ), ծել-ծելեր (վրց. աղիք), թօզ-թոզեր (թրք. փոշի), կույ-կույեր (թրք. հոր) և այլն:

Ծանոթություն.— Գրաբարի ան հոգնակերտը այս բարբառում կորցրել է իր հոգնակիության իմաստը, այդ պատճառով իշան, ձիան բառերի զրաբարյան հոգնակիների վրա ավելանում է էր մասնիկը. ինչպես՝ էշաներ, ձիաներ (ուշագրավ է էշ բառի անհնչյունափոխ ձևը): Այժ>էծ-էծաներ ձևը կազմվել է համաբանությամբ:

բ) Այն բարդ բառերը, որոնց հիմնական իմաստն արտահայտող երկրորդ բաղադրիչը միավանկ բառ է. ինչպես՝ աղաջուր>աղիջուր-աղիջրեր, կրակաց խօղ-կրակացխօղեր (մոխիր), ոսկէպատ>օսկեպատ-օսկէպատեր և այլն:

3. Նէր մասնիկն ստանում են.

ա) Թաղաձայնով վերջացող բազմավանկ բառերը. ինչպես՝ ականջ>անջակ-անջրկներ, թօնիր>թօնդիր-թօնդիրներ, լակոտ>կուտալ-կուտալներ և այլն: Այսպես են նաև փոխառյալ բառերը. ծուրբէլ-ծուրբէլներ (վրց. տզրուկ), քէներ-քէներներ (թրք. եզերք):

բ) Գրաբարում Ե-ով վերջացող և զաղտնավանկ ը ունեցող մեկուկես վանկանի՝ բարբառումս երկվանկ դիտվող բառերը. ինչպես՝ ծանր>ծանդր-ծանդրներ, սանր>սանտր>սանդր-սանդրներ, տայգր>տէքր-տէքրներ, ոսկր>օսկօր-օսկրներ և այլն:

գ) Գրաբարյան վերջահնչյուն ն-ից առաջ որևէ բաղաձայն ունեցող միավանկ բառերը. ինչպես՝ դուռն>դուրը-դրներ, հարսն>հարսը-հարսներ, ոտն>վօտը-վօտներ և այլն:

4. Ստան մասնիկն են ստանում ձայնավորով վերջացող երկվանկ և բազմավանկ բառերը. ինչպես՝ խնամի>խնամի-խնամէստան, լեզու>լիզու-լիզուստան, մատանի>մատնի-մատնէստան և այլն:

Այսպես են նաև փոխառյալ բառերը. կրիշա-կրիշէստան (ռուս. տանիք), դէղա-դէղէստան (վրաց. մայրիկ), տաթլի-տաթլէստան (թրք. քաղցրավենիք) և այլն:

Ծանոթ. 1.— Ձայնավորով վերջացող բառերի հոգնակին երբեմն լինում է նաև նէր մասնիկով. ինչպես՝ գինիներ, մատնիներ, օսկիներ և այլն:

Ծանոթ. 2.— Ստան մասնիկը հիմնականում արտահայտում է հավաքական իմաստ:

5. Բաղի վերահիշյալներից, բարբառումս սակավ գործածվում են նաև մի քանի այլ հոգնակերտ մասնիկներ, որոնք ոչ այնքան հոգնակիություն, որքան հավաքականության իմաստ են արտահայտում. դրանք են՝ ինֆ, ունֆ, իկ, տանֆ, դիֆ, ֆ:

6. Ինֆ, ունֆ մասնիկներն են ստանում ընտանիք, տոհմ, գերդաստան արտահայտող բառերի հոգնակի հավաքականները, ինչպես՝ անձնավորինք, շիտիպախօվինք, սաթլունք, կարաբախցունք և այլն:

7. Իկ — մարդիկ բառի զրաբարյան հոգնակերտը բարբառումս նույնությամբ պահպանվել է:

8. Տանֆ մասնիկն են ստանում Ե բաղաձայնով վերջացող և հավաքական իմաստ արտահայտող մի քանի բազմավանկ բառեր. օր. ախպրտանք, ընդէրտանք, կըտօրտանք, օսկըրտանք և այլն, որոնց հոգնակին կազմվում է նէր մասնիկով:

9. Դիֆ մասնիկն է ստանում կին բառի հոգնակին՝ կընզըտիք/կընդիք:

10. Գրաբարյան ՚ հոգնակերտն ստանում են որտեղացի ցույց տվող բառերը՝ Արթուրիցիք, Արդանչէցիք, Օլթէցիք ևն. ինչպես և՝ շատք>շատերը բառը:

11. Բնության էրևութներ արտահայտող բառերը և նրանց նմանությամբ կազմված մի քանի գոյականների հոգնակիի իմաստ արտահայտվում է խի մակբայի միջոցով. ինչպես՝ խի անիցք (անեծքներ), խի անձրե (անձրևներ), խի կարկուռ (շատ կարկուռ) ևն.:

12. Հոգնակերտ մասնիկներ չեն ստանում այն առարկաների անունները, որոնք բնության մեջ մեկ հատ են. ինչպես՝ արեգակ, էրկինք, օփալթ (ուսնյակ):

Արդվինի բարբառում, այսպիսով, հոգնակիները կազմվում են. միավանկ բառերը՝ էր, բազմավանկ բառերը՝ նէր մասնիկներով: Ստան և տանֆ մասնիկները հիմնականում արտահայտում են հավաքականության իմաստ և ունեն կիրառական նեղ ոլորտ: Մարդ բառի մեջ իկ օգտագործվում է իբրև քարացած ձև:

13. Հոգնակիի կազմության ժամանակ տեղի է ունենում ձայնավորների հնչյունափոխություն:

Թաղաձայնով վերջացող բառերի վերջին ա, է, ու, օ ձայնավորները փոխվում են ը-ի. ինչպես՝ անջակ-անջրկներ, ախպէր-ախպըրտանք, ջուր-ջըրեր, օսկօր-օսկըրներ ևն.:

ՀԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

14. Արդվինի բարբառի հոլովները համապատասխանում են արդի հայերենի հոլովներին: Գիտակցվում է իրի և անծի առումը: Անծի անուն դոյականները և այլ խոսքերի մասերը, ինչպես և անձնական դերանունները շունեն գործիականի և ներգոյականի հատուկ հոլովաձևեր: Այդ հոլովների իմաստն արտահայտվում է սեռականով և մէջ կապով:

Ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է, գործածվում է հոգով կամ առանց հոգի:

Նախադասության մեջ կատարում է ենթակայի պաշտոն:

Սեռական հոլովն ունի՝ հ, ու, ան, վա, օշ, օր, ց վերջավորությունները: Գործածվում է առանց հոգի. հանդես է գալիս հատկացուցիչի պաշտոնով: Տրականը ձևով չի տարբերվում սեռականից, երբ անորոշ է, գործածվում է հոգով, երբ որոշյալ է: Երբեմն և ճովո կապով ստանձնում է խնդրի պաշտոն:

Հայցականը առանձին հոլովաձև չունի. իրի առումով նման է ուղղականին, անծի առումով՝ տրականին, կատարում է խնդրի դեր:

Բացառականը կազմվում է մէջ վերջավորությամբ, ունի խնդրի պաշտոն:

Գործիականը կազմվում է սեռականով և օվ վերջավորությամբ:

Ներգոյականը ունի ուս վերջավորություն, կատարում է պարագայի պաշտոն:

Ծանոթություն.— Եկըս ճյուղի բարբառների ազդեցությամբ (Կարնո, Համշեն) ներգոյական հոլովի գործածությունը շատ սահմանափակվել է. բառերի մեծ մասը գործածվում է սեռական-տրականով և կապով:

ՀԱՆՈՒՄՆԵՐ

15. Արդվինի բարբառում գոյականներն ունեն 7 հոլովիչ՝ ուրեմն և 7 հոլովում:

Դրանք են՝ ի, ու, վա, օշ, ներքին ա, օ և զրաբարատիպ:

Ի հոլովում

16. Այս հոլովումը ամենակենսունակն է: Սրան են հետևում.

ա) Բաղաձայնով վերջացող գոյականների մեծ մասի եզակին և հոգնակին. ինչպես՝ ան-ջակ>անջրկի-անջրկնէրի, կուտունց>կուտունցի-կուտունցնէրի, փրսակ>փրսակի-փրսակնէրի ևն.:

բ) Գոյականաբար գործածվող բառերը. ինչպես՝ խելօք-խելօքի-խելօքնէրի, մէնծ-մէնծի-մէնծնէրի, իրէք-իրէքի-իրէքնէրի, հարուր-հարուրի-հարուրնէրի ևն.

դ) Հարակատար և ենթակայական դերբայների եզակին և հոգնակին. ինչպես՝ գինօվցած-գինօվցածի-գինօվցածնէրի, մօրցած-մօրցածի-մօրցածնէրի (մոռացած), էփօղ-էփօղի-էփօղնէրի, տէսնօղ-տէսնօղի-տէսնօղնէրի ևն.:

դ) Ու, ա ձայնավորով վերջացող բառերի եզակին. ինչպես՝ լիզու-լիզույի, կատու-կատույի, դաթու-դաթույի, դուգա-դուգայի (թրք. երինջ) ևն.:

Ծանոթ. 1.— Մ-ով վերջացող բառերը պատկանում են ու հոլովման:

Ծանոթ. 2.— Նրկձայնավորների արտասանությունը բարբառում տանելի չէ: Հորանջից խուսա-փելու համար ձայնավորների արանքում ավելանում է յ ձայնորդը, իսկ շեշտը տեղափոխվում է վերջին ձայնավորի վրա:

ե) Վա, ու և ներքին հոլովման պատկանող բառերի հոգնակին. ինչպես՝ տարի-տարվա-տարինէրի, պէղացի-գէղացու-գէղացինէրի, տուն-տան-տընէրի ևն.:

Ու հոլովում

16. Այս հոլովման են պատկանում.

ա) Մ-ով վերջացող բառերի եզակին. ինչպես՝ գինի-գինու, կաշի-կաշու, օսկի-օսկու ևն.:

բ) Որտեղացի ջույց տվող բառերը. ինչպես՝ Արթուվինցի-Արթուվինցու, Արդանջեցի-Արդանջեցու, Օլթեցի-Օլթեցու ևն.:

գ) Անորոշ դերբայը. ինչպես՝ խօսէլ-խօսէլու, սօրվէլ-սօրվէլու, վէրցընէլ-վէրց'նէլու ևն.:

դ) Ատան հոգնակերտ ունեցող բաղմավանկ բառերի հոգնակին. ինչպես՝ լիզու-լիզուստան-լիզուստու, կատու-կատուստան-կատուստու, գոգօ-գոգօստան-գոգօստու (վրաց. աղջիկ), բաբա-բաբաստան-բաբաստու (թրք. հայրիկ) ևն.:

Պտուհի հողակերպող ունեցող բառերի թեք հոլովներում շեշտն ընկնելով վերջին ձայնավորի վրա, իսկ հողակերպող կրճատվում է «տա» կապակցությունը, որ կատարվում է այսպես.
 ԳՈԳՈՍՏԱՍ > ԳՈԳՈՍՏԻՆԸ > ԳՈԳՈՍՏԻՆԻ:

Ներքին ա հոլովում

17. Այս հոլովման է հետևում տուն-տան և շուն-շան բառերի եզակին:

Ծանոթ.— Գրաբարի ա: պարզ ներգրական հոլովման պատկանող մնացած բառերը հետևում են ի հոլովման. ինչպես՝ ասէղ-ասիսի < ասէղն-ասղան, դուրը-դրրի < զուռն-զրան, ձուկը-ձրկի < ձուկն-ձկան են.:

Վա հոլովում

18. Այս հոլովման հետևում են ժամանակ ցույց տվող բառերը. ինչպես՝ ամար-ամրրվա (ամառ), դիշեր-դիշերվա, ձրմէր-ձրմէրվա ևն.:

Ծանոթ. 1.— աշուն և դարուն բառերը ենթարկվում են նաև ի հոլովման:

Ծանոթ. 2.— տարվա եղանակ և ժամանակ ցույց տվող բառերը գործիական և ներգոյական հոլովաձևեր չունեն:

Օչ հոլովում

19. Այս հոլովման են հետևում ազգակցություն և խնամակցություն ցույց տվող հետևյալ բառերի եզակին՝ անէր-անէրօշ, կէսուր-կիսրօշ, տալ-տալօշ, տէր-տիրօշ, տէքըր-տէքրօշ/տիրօշ:

Ներքին օ հոլովում

Այս հոլովման է պատկանում ազգակցություն և խնամակցություն ցույց տվող հետևյալ բառերի եզակին. ախպէր-ախպօր, սանահէր-սանահօր, սանամէր-սանամօր, կընքահէր-կընքահօր: Ծանոթ.— Ախպէր բառը պատկանում է նաև օչ հոլովման՝ ախպէրօշ:

ԳՐԱԲԱՐԱԿԵՐՊ ՀՈԼՈՎՈՒՄ

20. Գրաբարակերպ հոլովման են պատկանում.

ա) Հողակերպող ուղղականում տանհ, ինհ, ունհ վերջավորություններ ունեցող բառերը. ինչպես՝ ախպրրտանք-ախպրրտանց, Ջուրարինք-Ջուրարինհ, կարարախցունք-կարարախցունց ևն.:

բ) Մարդ բառի հողակերպ՝ մարթ-մարթիկ-մարթկէրանց:

գ) Աղջիկ բառի եզակին՝ ախշըկա և կնիկ բառը՝ կընդա, կընդիք:

Ըստ առանձին հոլովումների հոլովման ընդհանուր պատկերը հետևյալն է.

Ի հոլովում

Ուղղ.	անջակ	անջըկներ
Սեռ.	անջըկի	անջըկների
Տր.	անջըկին	անջըկներին
Հայց.	անջակ	անջըկներ
Բաց.	անջըկիմէն	անջըկներիմէն
Գործ.	անջըկով	անջըկներով
Ներ.	անջըկում	անջըկներում

Ու հոլովում

Ուղղ.	օսկի	օսկինէր-օսկէստան	խնամի-խնամէստան
Սեռ.	օսկու	օսկիսնու	խնամու-խնամէսնու
Տր.	օսկու	օսկիսնուն	խնամուն-խնամէսնուն
Հայց.	օսկի	օսկինէր-օսկէստան	խնամուն-խնամէսնուն
Բաց.	օսկումէն	օսկիսնումէն	խնամումէն-խնամէսնումէն
Գործ.	օսկով	օսկիսնով	
Ներ.	(օսկումէջը)	(օսկիսնումէջը)	

Ներքին հոլովում		Ոչ հոլովում	
Ուղղ.	տուն(ը)	շուն(ը	անէր
Սեռ.	տան	շան	անէրօշ
Տը.	տան(ը)	շան(ը)	անէրօշը
Հայց.	տուն(ը)	շուն(ը)	անէրօշը
Բաց.	տընիմէն	շընիմէն	անէրօշմէն
Գործ.	տընով	շընով	—
Ներգ.	(տան մեշը)	շան մեշ(ը)	—

Վա հոլովում		Օ հոլովում
Ուղղ.	օր	սանահէր(ը)
Սեռ.	օրվա	սանահօր
Տը.	օրվա	սանահօր
Հայց.	օր	սանահօր
Բաց.	օրվամէն	սանահօրմէն

Դարբարաւոր հոլովում		
Ուղղ.	Չուրաբինք	կընիկ-կընդիք
Սեռ.	Չուրաբինց	կընդա-կընդկէրաց
Տը.	Չուրաբինց(ը)	կընդա-կընդկէրաց(ը)
Հայց.	Չուրաբինց(ը)	կընդան-կընդկէրաց(ը)
Բաց.	Չուրաբինցմէն	կընդամէն-կընդկէրացմէն

Բ. ԱՄԱԿԱՆ

Ածականի համեմատության աստիճանները.

21. Ածականի դրական աստիճանը բառի ուղիղ ձևն է. ինչպես՝ մէնծ, պրստիկ, սիրուն ևն.

22. Բաղդատական աստիճանը կազմելիս գործածվում է նկարագրական եղանակը. համեմատելի առարկան ընդունում է բացառական խնդիր. ինչպես՝ իմ մանչը քու ախշըկամէն մենծ է. Մեր էքին ձէր էքիմէն պրստիկ է:

23. Իմաստի սաստկացման համար դրական աստիճանի վրա ավելացվում է դա (թրք. դահա) բառը. ինչպես՝ նրմա մանչը քու մանչիմէն դս. խէլօք է: Դուն ինծիմէն դա վէնգին իս (դու ինձանից ավելի ունեոր ես):

24. Գերադրական աստիճանը կազմվում է.

ա) Բիթուն (բուր) փոխառյալ բառով, որ ունենալով սեռականի ձև (բիթունի) ընդունում է բացառականի մէն վերջավորությունը, դառնում բացառական խնդիր. ինչպես՝ բիթունիմէն լավ ծարր չօրցավ: Բիթունիմէն խէլօքը դուն իս:

Այստեղ ածականը և նրա բացառական խնդիրը կայուն շարադասություն ունեն:

բ) Բիթուն բառի սեռականով և բա (վրա) կապով, որի շարադասությունը կայուն չէ. ինչպես՝ բիթունի բա խէլօքը դուն իս, կամ դուն իս բիթունի բա խէլօքը:

գ) Սակավ դեպքերում՝ խի, շատ մակբայներով. ինչպես՝ խի սիրուն (ամենասիրուն), խի լավ (ամենալավ), խի քաղցր (ամենաքաղցր) ևն.

Գ. ԹՎԱԿԱՆ

25. Արդվինի բարբառում կան քանակական, դասական և բաշխական թվականներ:

26. Քանակական թվականներն են.

1-մէկ, 2-էրկու, 3-իրէք, 4-չօրս, 5-հինգ, 6-վէց, 7-օխտը, 8-ութը, 9-ինը, 10-տասը, 20-քրսան, 30-յէրսուն, 40-քարսուն, 50-հիսսուն, 60-վացցուն 100-հարուր, 1000-հազար միլյօն:

Մանր՝ 70, 80, 90 թվականները, ինչպես «կը» ճյուղին պատկանող շատ բարբառներում, Արդվինում ևս արտահայտվում են թուրքերենից փոխառյալ թվականներով՝ յէթմիշ, աքսան, դօխսան:

Փոխառյալ թվականները պահպանվում են նաև բարդության ժամանակ. ինչպես՝ 72-յէթմիշ-էրկու, 86-ւաքսանրվէց, 95-դօխանըհինգ:

27. Բաղադրյալ քանակական թվականները կազմվում են տասնավորների և միավորների կցումով.

ա) Եթե կցող միավորն սկսվում է բաղաձայնով, տասնավորի վերջից ավելանում է ու ձայնավորը. ինչպես՝ յէրսունըշօրս, վացցունըմէկ, քարսունըվէց ևն.:

բ) Եթե կցվող միավորն սկսվում է բաղաձայնով և տասնավորն ունի դադարանշանակ ը, տասնավորից հետո ու չի ավելացվում. օրինակ՝ քըսան-քըսանվէց, քըսանմէկ-քըսանշօրս ևն.:

գ) Դրաբարյան տասն բառի դադարանշանակ ը-ն, որ բարբառիս մեջ գտնվում է բաց վանկում, բարդության ժամանակ պահպանվում է. ինչպես՝ տասն տասր-տասընիրէք, տասընհինգ, տասընշօրս ևն.:

28. Դասական թվականները Արդվինում հայերեն ձևեր չունեն, փոխարենը գործածվում են թուրքերենի դասական թվականները. ինչպես՝ բիրինջի (առաջին), իքինջի (երկրորդ), ուչինջի (երրորդ) ևն.:

29. Իաշխական թվականների իմաստն արտահայտվում է բացարձակ թվականների կրկնությամբ. ինչպես՝ մէկ-մէկ, էրկու-էրկու, իրէք-իրէք, շօրս-շօրս ևն.:

Ծանոթ.— Անձներական թվականները բարբառս չի պահպանել:

Դ. ԴՆՐԱՆՈՒՆ

30. Արդվինի բարբառում կան հետևյալ դերանունները՝ անձնական, ցուցական, հարցական, հարաբերական, փոխադարձ, որոշյալ, անորոշ, ժխտական:

31. Անձնական դերանուններն են՝ յէ, դուն, նա: Հոլովման պատկերն է.

	եղ. թ.	հոգ. թ.	եզ. թ.	հոռ. թ.	եզ. թ.	հոգ. թ.
Ու.	յե	մէնք	դուռն	դուք	նա	նանք ⁶
Ս.	իմ	մէր	քու	ձէք	նըմա	նանց
Տ.	ինձի	մէզի	քէզի	ձէզի	նըման(ը)	նանց(ը)
Հ.	ինձի	մէզի	քէզի	ձէզի	նըման(ը)	նանց(ը)
Բ.	ինձիմէն	մէզիմէն	քէզիմէն	ձէզիմէն	նըմամէն	նանցմէն ⁶

Ծանոթ. 1.— Գործիական հոլովի իմաստ արտահայտվում է սեռական հոլովով և բա «վր» կապով:

Ծանոթ. 2.— Առաջին դեմքի համար գործածվում է իրենս, երկրորդի՝ իրենդ, երրորդի՝ իրէնը ձևերը:

32. Ցուցական դերանուններն են. սա, դա, նա: է (ս), էտ, էն, էստօրի (այսպիսի), էտտօրի (այդպիսի), էնտօրի (այնպիսի), էստի||էստեղ (այստեղ), էտտի||էնտեղ (այդտեղ), էնտի||էնտեղ (այնտեղ), էսքան (այսքան), էտքան (այդքան), էնքան (այնքան), էսչաք (այսչափ), էտչաք (այդչափ), էնչաք (այնչափ):

Սա, դա նա և սրանց հոգնակին՝ սանք, դանք. նանք մեծ մասամբ գործածվում են անձի անուններ մատնացույց անելու համար:

Հոլովման պատկերը հետևյալն է՝

	եզ. թիվ	հոգ. թ.	եզ. թ.	հոգ. թ.	եզ. թ.	հոգ. թ.
Ու.	սա	սանք	դա	դանք	նա	նանք
Ս.	սըմա	սանց	դըմա	դանց	նըմա	նանց
Տ.	սըման	սանց(ը)	դըման(ը)	դանց(ը)	սըման(ը)	նանց(ը)
Հ.	սըման	սանց(ը)	դըման(ը)	դանց(ը)	նըման(ը)	նանց(ը)
Բ.	սըմամէն	սանցմէն	դըմամէն	դանսմէն	նմամէն	նանցմէն
Ու.	էս	էստօնք	էտ	էտօնք	էն	էնօնք
Ս.	էստօր	էստօնց	էտօր	էտօնց	էնդօր	էնօնց
Տ.	էստօր	էստօնց(ը)	էտօր	էտօնց(ը)	էնդօր	էնօնց(ը)
Հ.	է(ս)	էստօնք	էտ	էտօնք	էն	էնօնք
Բ.	էստօրմէն	էստօնցմէն	էտօրմէն	էտօնցմէն	էնդօրմէն	էնօնցմէն
Գ.	էստօլ	էստօնցօլ	էտօլ	էտօնցօլ	էնդօլ	էնօնցօլ

6 ա ձայնավորը դերանունների հոգնակիում արտասանվում է սովորականից երկար:

33. Հարցական դերանուններն են վօ՞վ (ո՞վ), վօ՞վք (ովքե՞ր), ի՞նչը, ինչե՞րը, քանի՞սը, քանիսնե՞րը, հոլովման պատկերն է.

Ու.	վօ՞վ	վօ՞վք	ի՞նչ(ը)	ինչե՞ր(ը)
Ս.	ուվի՞	ումի՞նց	ինչի՞	ինչերի՞
Տ.	ումի՞ն	ումի՞նց(ը)	ինչի՞(ն)	ինչերի՞(ն)
Հ.	ումի՞ն	ումի՞նց(ը)	ի՞նչ(ը)	ինչե՞ր(ը)
Բ.	ումիմէ՞ն	ումի՞նցմէն	ինչիմէ՞ն	ինչերիմէ՞ն
Գ.	—	—	ինչօ՞վ	ինչերօ՞վ
Ն.	—	—	ինչու՞մ(ը)	ինչերու՞մ(ը)

քանի՞սը	քանիսնե՞րը
քանիսի՞	քանիսների՞
քանիսի՞ն	քանիսներին
քանի՞սը	քանիսնե՞րը
քանիսիմէ՞ն	քանիսներիմէ՞ն
քանիսօ՞վ	քանիսներօ՞վ
քանիսու՞մ(ը)	քանիսներու՞մ

34. Հարաբերական դերանունները նույն հարցական դերանուններն են առանց հարցի:

35. Որպես փոխադարձ դերանուն գործածվում է մէկմէկելի//մեկմեկելու և հոլովվում հետևյալ ձևով.

Սեռ. մէկմէկելի-ելու, տր. մէկմէկելին-ելուն, հայց. նույնը, բաց. մէկմէկելիմէն-ելումէն ևն.:

36. Որոշյալ դերանուններն են՝ ամէնքը, ամէն մէկը, մէկելը (մյուսը), մեկէլնէրը (մյուսները), բիթուն (թրք. բուրբ):

Որոշյալ դերանունները գործածվում են իր և անձ ցույց տվող գոյականների փոխարեն: Առաջին դեպքում ունի գործիական և ներգոյական, երկրորդ դեպքում՝ ոչ: Հոլովման պատկերը հետևյալն է.

Ու.	մէկէլը	մէկէլնէրը	բիթունք(ը)
Ս.	մէկէլի	մէկէլնէրի	բիթունի
Տ.	մէկէլի(ն)	մէկէլնէրին	բիթունի(ն)
Հ.	մէկէլը	մէկէլնէրը	բիթունք(ը)
	մէկէլին	մէկէլնէրին	բիթունի(ն)
Բ.	մէկէլիմէն	մէկէլնէրիմէն	բիթունիմէն
Գ.	մէկէլօվ	մէկէլնէրիօվ	բիթունօվ
Ն.	մէկէլում	մէկէլնէրում	բիթունում

Անձի անունների դեպքում գործիական և ներգոյական հոլովները գործածական չեն:

Ծանոթ.— ամենի՞ր դերանունը լայն գործածություն չունի: Ամեն մեկը դերանվան հոլովման ժամանակ փոփոխության է ենթարկվում բարդության երկրորդ մասը. ամէն մէկը, ամէն մէկի ևն.:

37. Անորոշ դերանուններն են մէկը, ուրիշը, որոնք իրենց գործածությամբ նման են որոշյալ դերանուններին.

Իրի փոխառեն

Անձի փոխառեն

Ու.	մէկը	ուրիշը	ուրիշնէրը	մէկը	ուրիշը	ուրիշնէրը
Ս.	մէկի	ուրիշի	ուրիշնէրի	մէկի	ուրիշի	ուրիշնէրի
Տ.	մէկին	ուրիշին	ուրիշնէրին	մէկին	ուրիշին	ուրիշնէրին
Հ.	մէկը	ուրիշը	ուրիշնէրը	մէկին	ուրիշին	ուրիշնէրին
Բ.	մէկիմէն	ուրիշիմէն	ուրիշնէրիմէն	մէկիմէն	ուրիշիմէն	ուրիշնէրիմէն
Գ.	մէկօվ	ուրիշօվ	ուրիշնէրօվ	—	—	—
Ն.	մէկում	ուրիշում	ուրիշնէրում	—	—	—

38. Ժխտական դերանուններն են օչինչ (ոչինչ), օնչով (ոչոք), վօշ մէկը:

Յիշենք զերանունը գործածվում է իրի անունով, իսկ օնչօվ և վօչ մէկը դերանունները՝ անծի:

Ու.	օչինչ	օնչօվ	վօչ մէկը
Ս.	օչինչի	օնչօվի	վօչ մէկի
Տ.	օչինչին	օնչումի(ն)	վօչ մէկին
Հ.	օչինչ	օնչումի(ն)	վօչ մէկին
Բ.	օչինչիմէն	օչումիմէն	վօչ մէկիմէն
Գ.	օչինչօվ	—	—
Ն.	օչինչում	—	—

Ե. ԳԵՐԲԱՅ

40. Արդվինի բարբառն ունի գրական հայերենին համապատասխան դերբայներ՝ անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական և ըղձական:

41. Անորոշ դերբայն ունի էլ. ալ վերջավորությունները (էփէլ, աղալ). ուրեմն Արդվինի բարբառում կա երկու խոնարհում:

- 1. էլ. օրինակ՝ ածէլ, խափէլ, կախէլ են.:
- 2. ալ. օրինակ՝ աղալ, խաղալ, մընալ են.:

Ծանոթ. — գրաբարյան իլ և ալ խոնարհման բայերը բարբառիս մեջ հիմնականում վերածվել են էլ խոնարհման: Մօտիլ-մօտկընալ, յավելուլ-ավէլնալ և 6 անվանական բայերում իլ-ի փոխաբեն հանդես է գալիս ալ խոնարհման երկրորդական ձևում, դրանք են՝ ծարավիլ>ծարվընալ, կարմրիլ>կարմըրնալ, կակղիլ>կակօղնալ, կանաչիլ>կանչընալ, պառաւիլ>պարվընալ, տափակիլ>տափկընալ:

Այդ իսկ պատճառով բայերի մեծ մասը պատկանում է էլ խոնարհման:

42. Անկատար դերբայն ունի ըս վերջավորություն (էփէլիս, աղլիս): Սյս դերբայը ծագում է գրաբարի նախդրիվ հայցականից⁷:

43. Վաղակատար դերբայը կազմվում է իլ վերջավորությամբ, որը ավելանում է անորոշ դերբայի կամ կատարյալի բայահիմքին, ինչպես գրական լեզվի մեջ (աղցիլ, զնացիլ, էփիլ են.):

44. Հարակատար դերբայը կազմվում է ած վերջավորությամբ և դրվում է երկու բայահիմքերին՝ վաղակատարի կանոններով (աղացած, խաշած, կարթըցած, էփած, մըրսած են.):

45. Ենթակայական դերբայը կազմվում է արշի հայերենի կանոններով. էլ խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է անորոշ դերբայի հիմքից և օղ վերջավորությամբ. ինչպես՝ գրէլ-գըրօղ:

Ալ խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից և օղ վերջավորությամբ՝ ինչպես աղալ-աղցօղ:

46. Ըղձական դերբայը կազմվում է անորոշի բայահիմքով և ա վերջավորությամբ՝ ալ խոնարհման ժամանակ, ի՛ էլ խոնարհման բայերի ժամանակ. ինչպես՝ աղա, կարթա, էփի, խօսի են.:

47. Օժանդակ բայը գրաբարի համեմատությամբ հետևյալ պատկերն ունի.

Ներկա		Անցյալ	
եմ>իմ	եմք>ինք	էի>էյ	եաք>էյնք
ես>իս	էք>իք	էիր>էյր	էիք>էյք
է>է	են>ին	էր>էր	էին<էյն

ԽՈՆԱՐՀՈՒՄ

58. Բայն ունի 5 եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական:

Սահմանական եղանակ

59. Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են անկատար դերբայով և օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերով:

7 է. Աղ ա յ ա ն, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 197: Ա. Ար ա հ մ յ ա ն, Հայերենի գերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 117: Ա. Ղ ա ո ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 332—333:

Ներկա

խօսելիս իմ	խօսելիս ինք	խաղիս իմ	խաղիս ինք
խօսելիս իս	» իք	խաղիս իս	խաղիս իք
խօսելիս է	» ին	խաղիս է	խաղիս ին

Անցյալ անկատար

խօսելիս էյ	խօսելիս էյնք	խաղիս էյ	խաղիս էյնք
խօսելիս էյք	» էյք	» էյք	» էյք
» էր	» էյն	» էր	» էյն

50. Օժանդակ բայը նախադաս գործածելիս և ժխտական խոնարհման դեպքում անկատար դերբայն ունենում է ոչ թե լիս, այլ լի վերջավորություն (սղվում է վերջին ս-ն)։ օրինակ՝ յէ էյ խօսելի, չէմ խօսելի ևն.։

Ծանոթ.— Կան շուրջ 3 տասնյակ բայեր, որոնց ներկան և անցյալ անկատարը կազմվում են նաև կու մասնիկով և գրաբարի ներկա ձևերով. ինչպես՝ կումարթէմ=մորթում եմ, կուծախի—ծախում է, կուխափի—խաբում է, կունըշանէյն—նշանում էին, կուանցնէյն=անցնում էին, կումօղկընայն=մոտենում էին ևն., որոնք արդյունք են սկզբնական բարբառների (Կարնո, Համշենի) ազդեցության։

51. Անցյալ անկատար ժամանակի եզակի առաջին և երկրորդ դեմքերի համար բարբառս ճանաչում է նաև էր ձևը. ինչպես՝ յէ խօսելիս էր, օր դուն էկար—ես խոսում էի, դու էկար։ Դուն բանելիս էր, օր յէ զնացի=դու աշխատում էիր, որ ես զնացի էնումը դուն մէրնէլիս էր, ամա յէ օշինշ չի կա էր անէլի—այն ժամանակ դու մեռնում էիր, բայց ես ոչինչ չէի կարողանում անել։

Այս ձևը համարյա մոռացության է տրված։ Այն սլահապանվել է Բաթումում, Գազրայում, Կրասնոդարում և Նովոռոսիյսկում ապրող միայն մի քանի ծերերի մոտ։

Հավանաբար, անցյալ ժամանակի երրորդ դեմքի և՛ ձևն ընդհանրացած է եղել եզակի և հոգնակի բոլոր դեմքերի համար՝ ինչպես այդ սեսնում ենք Ուրմիայի (Խոյի) և Մարաղայի օ բարբառներում, իսկ հետագայում նոր ձևերի շործածությունը հին ձևերին աստիճանաբար դուրս է մղել, որի հետքերն են միայն մնացել։

52. Ապառնի և անցյալի ապառնի ժամանակները կազմվում են ապառնի դերբայով և օժանդակ բայի համապատասխան ձևերով։

Ապառնի

խօսելու իմ	խօսելու ինք	խաղու իմ	խաղու ինք
խօսելու իս	խօսելու իք	խաղու իս	խաղու իք
խօսելու է	խօսելու ին	խաղու է	խաղու ին

Անցյալի ապառնի

խօսելու էյ	խօսելու էյնք	խաղու էյ	խաղու էյնք
խօսելու էյք	խօսելու էյք	խաղու էյք	խաղու էյք
խօսելու էր	խօսելու էյն	խաղու էր	խաղու էյն

53. Ապառնի և անցյալի ապառնիի այս ձևերը բարբառում լայն տարածում չունեն, սահմանափակ գործածվում են մեծ մասամբ թեական, հարցական նախադասություններում։

Սահմանական ապառնի և անցյալի ապառնի ժամանակների իմաստով ավելի շատ գործածվում են պայմանական և հարկադրական եղանակների համապատասխան ժամանակների ձևերը. օրինակ՝ կուխընդամ=կծիծաղեմ և ծիծաղելու եմ, տի վազէյ=պիտի վազէի և վազելու էի։

54. Վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակները կազմվում են վաղակատար դերբայով և օժանդակ բայի համապատասխան ձևերով։

Վաղակատար

խօսիլ իմ	խօսիլ ինք	խաղցիլ իմ	խաղցիլ ինք
խօսիլ իս	խօսիլ իք	խաղցիլ իս	խաղցիլ իք
խօսիլ է	խօսիլ ին	խաղցիլ է	խաղցիլ ին

8 Հ. Ա ճ ա ո յ ա ն, Հիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 4, էջ 35։ Ա. Ղ ա ռ ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, էջ 365—367։ Մ. Ա ս ա տ ը յ ա ն, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962, էջ 104։

Անցյալի վաղակատար

խօսիլ էյ	խօսիլ էյնք	խաղցիլ էյ	խաղցիլ էյնք
խօսիլ էյր	խօսիլ էյք	խաղցիլ էյր	խաղցիլ էյք
խօսիլ էր	խօսիլ էրն	խաղցիլ էր	խաղցիլ էրն

55. Վաղակատարի այս ձևերը բարբառում քիչ են գործածվում։ Վաղակատարի իմաստը մեծ մասամբ արտահայտվում է հարակատարով. օրինակ՝ խօսած իմ = խոսած եմ և խոսել եմ, աղած իմ = աղած եմ և աղել եմ։

56. Հարակատար և անցյալի հարակատար ժամանակները կաղմվում են հարակատար դերժայով և օժանդակ բայի համապատասխան ժամանակներով.

Հարակատար

խօսած իս	խօսած ինք	խաղցած իմ	խաղցած ինք
խօսած իս	խօսած իք	» իս	» իք
խօսած է	խօսած իս	» է	» ին

Անցյալի հարակատար

խօսած էյ	խօսած էյնք	խաղցած էյ	խաղցած էյնք
խօսած էյր	» էյք	» էյր	» էյք
խօսած էր	» էյն	» էր	» էյն

Անցյալ կատարյալ

էլ և ալ խոնարհման սլարդ բայերի անցյալ կատարյալը ներգործածն է. ինչպես՝ ածել-ածէցի, թաղել-թաղէցի, խընդալ-խընդացի, մընալ-մընացի ևն.։

Ի>է խոնարհման, ինչպես և ա խոնարհման ածանցավոր բայերի անցյալ կատարյալի հիմքը կրավորածն է. ինչպես՝ հաքնէլ-հաքա, թըրնէլ (թռնել)-թըրա, լօղնալ-լօղցա, կարօտնալ-կարօտցա ևն.։

խօսէցի	խօսէցինք	լավցա	լավցանք
խօսէցիր	խօսէցիք	լավցալ	լավցաք
խօսից	խօսէցին	լավցավ	լավցան

57. Գրաբար իլ խոնարհման պատկանող բայերը, որ բարբառում վերածվել են էլ խոնարհման, անցյալ կատարյալում ունենում են ալ խոնարհման բայերի վերջավորություններ, իսկ աջ խոնարհման պարզ բայերը նաև՝ էլ խոնարհման բայերի վերջավորություններ. ինչպես՝ խաւարիլ-խավրէլ, աղալ։

խավրէցա	խավրէցանք	աղցի	աղցինք
խավրէցառ	խավրէցաք	աղցիր	աղցիք
խավրէցամ	խավրէցան	աղից	աղցին

Ըղծական եղանակ

58. Ըղծական ապառնին ունի ս, ս, ի կամ ա, նք, ք, ն. իսկ անցյալի ապառնին՝ ւ, յր. յնք, ւք, ւն վերջավորությունները։

Ապառնի

Անցյալի ապառնի

խօսէս	խաղամ (սլարեմ)	խօսէյ	խաղայ
խօսէս	խաղաս	խօսէյր	խաղայր
խօսի	խաղա	խօսէր	խաղար
խօսիսք	խաղասք	խօսէյնք	խաղայնք
խօսիք	խաղաք	խօսէյք	խաղայք
խօսին	խաղան	խօսէյն	խաղայն

Պայմանական եղանակ

59. Պայմանական եղանակը կաղմվում է ըղծական եղանակից իու (և) եղանակից ղաս դործածութեամբ։

Ապառնի		Անցյալի ապառնի	
կուխօսէմ	կուխաղամ	կուխօսէյ	կուխաղայ
կուխօսէս	կուխաղաս	կուխօսէյր	կուխաղայր
կուխօսի	կուխաղա	կուխօսէր	կուխաղար
կուխօսինք	կուխաղանք	կուխօսէյնք	կուխաղայնք
կուխօսիք	կուխաղաք	կուխօսէյք	կուխաղայք
կուխօսին	կուխաղան	կուխօսէյն	կուխաղայն

Ծանոթ.— ձայնավորով սկսվող բառերն ունեն կ. ինչպես՝ կօրթամ, կօռնամ:

Հարկադրական եղանակ

60. Հարկադրականի եղանակին է տի (պիտի), որ դրվում է ըղձական եղանակի ձևերի վրա:

Ապառնի		Անցյալի ապառնի	
տի խօսեմ	տի խաղամ	տի խօսէյ	տի խաղայ
տի խօսէս	տի խաղաս	տի խօսէյր	տի խաղայր
տի խօսի	տի խաղա	տի խօսէր	տի խաղար
տի խօսինք	տի խաղանք	տի խօսէյնք	տի խաղայնք
տի խօսիք	տի խաղաք	տի խօսէյք	տի խաղայք
տի խօսին	տի խաղան	տի խօսէյն	տի խաղայն

61. Բացի այդ, հարկադրականի անցյալի մեկ ձև ես գոյություն ունի, որի ժամանակ ըղձական և զական 3-րդ դեմքը մնում է անփոփոխ, իսկ եղանակին խոնարհվում է. օրինակ՝

տիէյ խօսի	տիէյնք խօսի
տիէյր խօսի	տիէյք խօսի
տիէր խօսի	տիէյն խօսի

Ծանոթ.— տի եղանակին ձայնավորը շեշտից զրկվելով կարող է և՛ սղվել, և՛ մնալ:

Հրամայական եղանակ

Հրամայական եղանակը կազմվում է մի քանի ձևով.

1. էլ խոնարհման բայերի եզակին կազմվում է ներկայի հիմքից, որին ավելանում է է (իւ) վերջավորությունը. օրինակ՝ խօսէ՛ (խօսել), ծալէ՛ (ծալել), կարէ՛ (կարել), կօխէ՛ (կօխել), նէրէ՛ (ներել), ավիրի՛ (ավիրել), յէրքի՛ (երգել), դէղնի՛ (դեղնել), ծէծի՛ (ծեծել), թափի՛ (թափել) ևն.:

Ծանոթ.— Մի շարք բայերի հրամայականը լինում է նույն կատարյալի հիմքը. ինչպես՝ զարթի՛ց (զարթնել), հօտի՛ց (հոտել), կանգնի՛ց (կանգնել), նի՛ստ, նըստի՛ց (նստել) ևն.:

2. Ալ խոնարհման պարզ և ածանցավոր բայերի եզակին կազմվում է.

ա) կատարյալի հիմքից, որին ավելանում է ի (=իւ) վերջավորությունը. ինչպես՝ կարթըցի՛ (կարդալ), հասկըցի՛ (հասկանալ), մոտէցի՛ (մոտենալ) ևն.:

բ) ներկայի հիմքից և ա վերջավորությամբ. ինչպես՝ դօրա՛ (դռնալ), խընդա՛ (խնդալ), մընա՛ (մնալ), սօղա՛ (սողալ), օրօսա՛ (որոտալ) ևն.:

գ) ներկայի և կատարյալի հիմքից ա և ի վերջավորությամբ. ինչպես՝ աղա՛-աղցի՛ (աղալ), լօղա՛-լօղցի՛ (լողալ), խըխճա՛-խըխճացի՛ (խղճալ), դօղա՛-դօղցի՛ (դողալ) ևն.:

3. էլ խոնարհման բայերի հոգնակի հրամայականը կազմվում է ներկայի կամ կատարյալի հիմքից, որին ավելանում է է՛ վերջավորությունը. ինչպես՝ ալէ՛ք (ասել), հազէ՛ք (հազալ), համօզէ՛ք (համոզել), էխթէցէ՛ք (հաղթել), պարկէցէ՛ք (պառկել), փօրէցէ՛ք (փորել) ևն.:

4. Ալ խոնարհման բայերի հոգնակին կազմվում է կատարյալի հիմքից, որին ավելանում է է՛ վերջավորություն. ինչպես՝ աղցէ՛ք (աղալ), մէնծըցէ՛ք (մեծանալ), մօրցէ՛ք (մոռանալ), փէտըցէ՛ք (փայտանալ) ևն.:

5. Բոլոր բայերի արգելական հրամայականը կազմվում է մի մասնիկով, որը սկզբից կանոնավոր կերպով ավելանում է եզակի և հոգնակի ձևերի վրա. օրինակ՝ մի՛ խօսէ-մի՛ խօսէք, մի՛ յէրքի-մի՛ յէրքէք, մի՛ կարթըցի-մի՛ կարթըցէք, մի՛ խընդա-մի՛ խընդացէք, մի՛ ասա-մի՛ ասէք, մի՛ խաղա-մի՛ խաղցէք ևն.:

62. Բացի սովորական հրամայականից Արդվի՛նի բարբառը ճանաչում է հրամայականի մեկ այլ ձև ևս, որի մեջ ամփոփվում է և՛ հրաման, և՛ հարցում. *Ինչպես՝ խօսի՞ս ա, քրնի՞ս ա, վազի՞ս ա, նշանակում է՝ խօսիր, ինչու չես խոսում, քնում, վազում են։ Այս ձևը, որ կա Պոլսի բարբառում, չ. Աճառյանը անվանել է հարցականաձև հրամայական⁹։ Այս ձևը գործածական է միայն մտերմական միջավայրում։*

ԺԵՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

63. Գործողության ժխտումը կատարվում է չ և չի մասնիկներով։ Չ մասնիկով կազմվում են սահմանական եղանակի ժամանակները, բացի անցյալ կատարյալ պարզ ժամանակից։ *Ինչպես նշել ենք. գործողությունը ժխտելու դեպքում օժանդակ բայն ընկնում է դերբայից առաջ։*
Օժանդակ բայի ժխտական ձևերը լինում են

ներկա — չեմ, չէս, չի, չինք, չէք, չեն։
անցյալ — չէյ, չէյր, չէր, չէյնք, չէյք, չէյն։

64. Ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայը լինում է նախադաս.
Ներկա — չեմ խօսելի, չէս խօսելի, չի խօսելի. չէնք խօսելի են.։
Ապառնի — չեմ խօսելու, չէս խօսելու, չի խօսելու. չէնք խօսելու են.։
65. Անցյալ կատարյալի ժխտականը կազմվում է ու-ով, որը դրվում է կատարյալի դրական ձևերի վրա։

չի խօսեցի	չի լավցա
չի խօսեցիր	չի լավցար
չի խօսից	չի լավցավ են։

66. Ըղձական եղանակի ժխտականը կազմվում է չի-ով. չի խօսեմ, չի խօսես, չի խօսե՛ն են.։
67. Հետաքրքրական է հարկադրականի ժխտական կաղմությունը։ Ժխտական չի մասնիկը մերթ միանում է պիտի եղանակիչին և լինում է չիպտի, մերթ՝ նրա երկրորդ բաղադրամասին և լինում է չիտի, մերթ էլ՝ առաջին բաղադրիչին և լինում է չիպի և այսպիսով ստացվում են երեք տարբեր ձևեր։

ա) Չիպտի խօսեմ, չիպտի խօսես, չիպտի խօսի, չիպտի խօսինք են.։
բ) Չիտի խօսեմ, չիտի խօսես, չիտի խօսի, չիտի խօսինք են.։
գ) Չիպի խօսեմ, չիպի խօսես, չիպի խօսի, չիպի խօսինք են.։
Հարկադրականի անցյալը կազմվում է նույն այս եղանակներով.
ա) Չիպտի խօսէյ, չիպտի խօսէյր, չիպտի խօսէր, չիպտի խօսէյնք են.։
բ) Չիտի խօսէյ, չիտի խօսէյր, չիտի խօսէր, չիտի խօսէյնք են.։
գ) Չիպի խօսէյ, չիպի խօսէյր, չիպի խօսէր, չիպի խօսէյնք են.։

68. Այս ձևերից բացի հարկադրականի անցյալ ժխտականի մեկ ձև ևս գոյություն ունի. այդ այն է, որ խոնարհվում են այս երեք ժխտական եղանակիչը, իսկ բայը, որ ունի ըղձական եղանակի եզակի 3-րդ դեմքի ձև, մնում է անփոփոխ. *Ինչպես՝ չիպտէյ խօսի, չիպտէյր խօսի, չիպտէր խօսի, չիպտէյնք խօսի են.։*

Մանոթ.— Օժանդակ բայի ժխտական ձևը և տաղաս գործածելու դեպքում լինում է է>ի. Ինչպես՝ ասող չիմ, խօսող չիմ են.։

69. Երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմելու համար օգտագործվում են ըլնէլ>լի-նել բայի խոնարհված ձևերը, որոնք միանում են անկատար, ապառնի և հարակատար դերբայ-ներին (խօսելիս ըլնէմ, խօսելու ըլնէմ, խօսած ըլնէմ են.)։

⁹ Վ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ 282։